

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

20 հոկտեմբերի 2023թ.  
ք. Երևան

N 71-Ա

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ԹԻՎ 1 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ  
ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Ուսումնասիրելով թիվ 1 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2023 թվականի սեպտեմբերի 22-ի «Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրություններում տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումների վերաբերյալ» թիվ 6-Ա որոշումը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

**Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Թիվ 1 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2023 թվականի սեպտեմբերի 22-ի «Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրություններում տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումների վերաբերյալ» թիվ 6-Ա որոշմամբ ներկայացվել է միջնորդություն՝ թիվ 1/01 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ Կարինե Ղազարանի, թիվ 1/12 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներ՝ Վազգեն Գալստյանի և Վարդիթեր Ավագյանի ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականներն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ:

Թիվ 1/01 տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հանձնաժողովի նախագահ Վահե Վենյամինովի կողմից կատարված հետևյալ գրառումը՝ «Մատյան 1-ում ընտրողը չի ստորագրել, բայց հանձնաժողովի անդամի կնիքը առկա է:»:

Թիվ 1/12 տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա են հետևյալ գրառումները՝

- «Ժամը 08:00-ից մինչև 10:00-ն ընտրական ցուցակների մոտ նստած հանձնաժողովի անդամ Վազգեն Գալստյանի կողմից սխալմամբ 940 տողի Մամայան Ալվարդ Շալենի ընտրողի փոխարեն դրել է իր անհատական կնիքը և 941 տողի Մամուլյան Անահիտ Վլադիմիրի անվան դիմաց դրել է իր անհատական կնիքը: Ինչի մասին ընտրական ցուցակ մատյանի համապատասխան տողերում կատարվել է գրառում:»

- «Հանձնաժողովի անդամ Վարդիթեր Ավագյանի սխալի պատճառով տող 231 Պետրոսյան Արտակի անվան դիմաց ստորագրել է այլ անձ:»:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 66-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն. «...Ընտրողների գրանցումն իրականացնող հանձնաժողովի անդամն ընտրողից վերցնում է քվեարկության կտրոնը, ընտրողների ցուցակում գտնում է ընտրողի տողը, ընտրողը ստորագրում է իր տվյալների դիմաց՝ ընտրողի ստորագրության համար նախատեսված սյունակում և իր անհատական կնիքն է դնում համապատասխան սյունակում, որից հետո անհատական կնիքով կնքում քվեարկության կտրոնը և այն փոխանցում ընտրողին:»:

Թիվ 1/01 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ Կարինե Ղազարյանը թույլ է տվել Ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված՝ ընտրողների գրանցումն իրականացնող հանձնաժողովի անդամի կողմից ընտրողին ընտրողների ցուցակում գրանցելու կարգի խախտում, որի հետևանքով որևէ ընտրողի ընտրելու իրավունք չի սահմանափակվել:

Թիվ 1/12 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներ՝ Վազգեն Գալստյանը և Վարդիթեր Ավագյանը թույլ են տվել Ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված՝ ընտրողների գրանցումն իրականացնող հանձնաժողովի անդամի կողմից ընտրողին ընտրողների ցուցակում գրանցելու կարգի խախտում, որի հետևանքով որևէ ընտրողի ընտրելու իրավունք չի սահմանափակվել:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ թիվ 1 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն անհրաժեշտ է համարել միջնորդություն ներկայացնել Կենտրոնական ընտրական հանձնաժողով՝ թիվ 1/01 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ Կարինե Ղազարյանի, թիվ 1/12 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներ՝ Վազգեն Գալստյանի, Վարդիթեր Ավագյանի՝ ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականներն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ թիվ 1/01 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ Կարինե Ղազարյանը, թիվ 1/12 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներ՝ Վազգեն Գալստյանը և Վարդիթեր Ավագյանը պատշաճ ծանուցվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2023 թվականի հոկտեմբերի 20-ի ժամը 15:00-ի նիստի մասին:

Նիստին ներկայացել է միայն Վազգեն Գալստյանը, ով հաստատել է վերոգրյալ հանգամանքները՝ հավելելով, որ լարված աշխատանքի պատճառով շփոթմունք է տեղի ունեցել, ինչը հանգեցրել է Ընտրական օրենսգրքի Ձեր կողմից հիշատակված հոդվածի պահանջների խախտման:

Սույն վարչական վարույթի շրջանակներում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կապ է հաստատել թիվ 1/01 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի և հանձնաժողովի անդամ Կարինե Ղազարյանի հետ, որոնք հաստատել են գրանցամատյանում արձանագրված հանգամանքները:

Ուսումնասիրելով թիվ 1/01 տեղամասի ընտրողների ստորագրված ցուցակները՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ ընտրողների ստորագրված ցուցակի 332-րդ տողում «Հանձնաժողովի ընտրողների գրանցման

համար պատասխանատու անդամի անհատական կնիք» սյունակում դրված է անհատական կնիք, սակայն նույն տողի որևէ սյունակում ստորագրություն առկա չէ:

Վերոգրյալի հաշվառմամբ, գնահատելով սույն վարչական վարույթի շրջանակներում թիվ 1/01 տեղամասային ընտրական հանձնաժողովին առնչվող հանգամանքները՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ հանձնաժողովի անդամ Կարինե Ղազարյանը թույլ է տվել Ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջների խախտում՝ իր անհատական կնիքը դնելով մինչև ընտրողի կողմից ստորագրելը:

Սույն վարչական վարույթի շրջանակներում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կապ է հաստատել թիվ 1/12 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի հետ, ով նշեց, որ հանձնաժողովի անդամ Վազգեն Գալստյանը 942-րդ տողի փոխարեն՝ սխալմամբ այլ տողերում է դրել իր անհատական կնիքը, իսկ հանձնաժողովի անդամ Վարդիթեր Ավագյանը հնարավորություն է ընձեռել այլ ընտրողի ստորագրելու 231-րդ տողում, թեև 231-րդ տողում գրանցված են Արտակ Պետրոսյանի տվյալները: Միաժամանակ նշեց, որ երբ ընտրող Արտակ Պետրոսյանը ներկայացել է քվեարկության և հայտնաբերել, որ իր տվյալների դիմաց առկա է ստորագրություն, ապա ընտրողի ընտրելու իրավունքն ապահովվել է՝ հնարավորություն ընձեռելով ստորագրելու նույն տողի այլ սյունակում:

Ուսումնասիրելով թիվ 1/12 տեղամասի ընտրողների ստորագրված ցուցակը՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ ցուցակի 940-րդ և 941-րդ տողերում դրված է նույն անհատական կնիքը, որոնց դիմաց ընտրողի ստորագրություն առկա չէ: Սխալմունքի վերաբերյալ գրառում է կատարված թիվ 1/12 տեղամասի ընտրողների ստորագրված ցուցակի 940-րդ և 941-րդ տողերի «Լրացուցիչ նշումներ» սյունակում:

Նույն ցուցակի ուսումնասիրությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ ցուցակի 231-րդ տողում ընտրող Արտակ Պետրոսյանի տվյալների տողում առկա է երկու ստորագրություն և երկու տարբեր անհատական կնիքներ:

Ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն. «Մասնագետը տպված քվեարկության կտրոնը ընտրողի անձը հաստատող փաստաթղթի հետ վերադարձնում է ընտրողին, որից հետո ընտրողը մոտենում է ընտրողների գրանցումն իրականացնող հանձնաժողովի համապատասխան անդամին: Ընտրողների գրանցումն իրականացնող հանձնաժողովի անդամն ընտրողից վերցնում է քվեարկության կտրոնը, ընտրողների ցուցակում գտնում է ընտրողի տողը, ընտրողը ստորագրում է իր տվյալների դիմաց՝ ընտրողի ստորագրության համար նախատեսված սյունակում և իր անհատական կնիքն է դնում համապատասխան սյունակում, որից հետո անհատական կնիքով կնքում քվեարկության կտրոնը և այն փոխանցում ընտրողին:»:

Վերոգրյալի հաշվառմամբ գնահատելով սույն վարչական վարույթի շրջանակներում թիվ 1/12 տեղամասային ընտրական հանձնաժողովին առնչվող հանգամանքները՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ հանձնաժողովի անդամ Վազգեն Գալստյանը թույլ է տվել Ընտրական օրենսգրքի 66-

րդ հոդվածի 8-րդ մասի պահանջների խախտում՝ իր անհատական կնիքը դնելով մինչև ընտրողի կողմից ստորագրելը:

Հանձնաժողովի անդամ Վարդիթեր Ավագյանի անուշադրության պատճառով թույլ է տրվել Ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջների խախտում, որի արդյունքում ընտրողն ստորագրել է սխալ տողում:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի 21-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

## **Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով կազմավորված թիվ 1/01 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ Կարինե Միխայելի Ղազարյանի հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ թիվ 1 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի միջնորդությունը բավարարել և ուժը կորցրած ճանաչել Կարինե Միխայելի Ղազարյանի ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականը:

2. Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով կազմավորված թիվ 1/12 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ Վազգեն Խաչիկի Գալստյանի հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ թիվ 1 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի միջնորդությունը բավարարել և ուժը կորցրած ճանաչել Վազգեն Խաչիկի Գալստյանի ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականը:

3. Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով կազմավորված թիվ 1/12 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ Վարդիթեր Արմենի Ավագյանի հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ թիվ 1 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի միջնորդությունը բավարարել և ուժը կորցրած ճանաչել Վարդիթեր Արմենի Ավագյանի ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ օրացուցային երեք օրվա ընթացքում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Վ. Հովակիմյան**